ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆ» ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Republic of Armenia, Yerevan Municipality
Yerevan Scientific Medical Center

Республика Армения, Мэрия г. Еревана
Ереван Научно-медицинский центр

№ 5/17-366
20.11.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ
«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ
Տնօրենի
ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հետևյալ փաստերը.

«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ն 2023 թվականի կարիքների համար գնանշման հարցման գնման ձևով կազմակերպվել է «ԵԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/14» ծածկագրով գնման ընթացակարգը, որի արդյունքում հայտ է ներկայացրել «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ՝ 04247081, էլ. փոստ՝ shahinyanmurad@mail.ru, հեռ. +374 98 52 55 29), որի հիմնադիրը հանդիսանում է Մուրադ Շահինյանը:

Հայտերի գնահատման փուլում պարզվել է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «ԳԱԳ-ՄԱՐԿ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 04239009) հիմնադիրը հանդիսանում է «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի հիմնադիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը և առաջնորդվելով ՀՀ Կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121-րդ կետով՝ որոշվեց չդիտարկել «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «ԳԱԳ-ՄԱՐԿ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառված լինելը ինքնաբերաբար հանգեցնում է «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի պահանջներով՝
ՈՐՈՇԵՑԻ

1. «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՏՆՕՐԵՆ՝ Հ. ԲԱԼՅԱՆ

Հր.Ներսիսյան 7 Հեռ. (010) 20-70-07
Պ. Սևակ 5 Հեռ. (010) 28-85-50 info@yerevanmc.am